ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.04.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ

թիվ ՍՑ-ԱՄ-2018/34

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.03.2018թ. թիվ 03/26-3/4976-18 գրությամբ «Մեծ հիմք» Ա/Կ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 16.03.2018թ. թիվ 01/61-5738 գրության հիման վրա, 19.03.2018թ. թիվ 03/26-3/4976-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Մեծ հիմք»

Ա/Կ-ին (այսուհետ՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Մեծ հիմք» Ա/Կ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

<< գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «Մեծ հիմք» Ա/Կ-ի կողմից գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Մեծ հիմք» Ա/Կ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/34 ընթացակարգի շրջանակներում հրավիրված 22.03.2018թ. ժամը 12:00-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը

3. **<u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Երևանի քաղաքապետարանը 16.03.2018թ. թիվ 01/61-5738 գրությամբ դիմել է << ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

Երևանի քաղաքապետարանի կողմից «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/46» ծածկագրով ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով նվազագույն գնային առաջարկ էր ներկայացրել «Մեծ Հիմք» Ա/Կ-ն, սակայն 26.02.2018թ. Ընկերության տնօրենի կողմից գրավոր դիմում է ներկայացվել Երևանի քաղաքապետարան, համաձայն որի վերջինս հրաժարվել է գնման ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով հետագա մասնակցությունից:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/34 ընթացակարգի շրջանակներում հրավիրված 22.03.2018թ. ժամը 12:00-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/34 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/34 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/46» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Մեծ Հիմք» Ա/Կ-ն:

2. «Մեծ Հիմք» Ա/Կ-ն 26.02.2018թ.-ին «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/46» ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովին ներկայացված գրությամբ հայտնել է, որ 2018 թվականի փետրվարի 23-ին Երևանի քաղաքապետարնի կողմից կազմակերպված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/46» ծածկագրով «Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի թվով 5 մանկապարտեզների վերանորոգման» աշխատանքների բաց մրցույթում որպես մասնակից հանդես եկած «Մեծ Հիմք» Ա/Կ-ի կողմից ներկայացված թիվ 3-րդ չափաբաժնի գնային առաջարկում տեղի է ունեցել վրիպակ և խնդրել է «Մեծ Հիմք» Ա/Կ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը՝ վերը նշված չափաբաժնի մասով չքննարկել և մերժել:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 27.02.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի 1.2 ենթակետով կայացված որոշմամբ, հիմք ընդունելով «Մեծ Հիմք» Ա/Կ-ի կողմից 26.02.2018թ. ներկայացված գրությունը, թիվ 3-րդ չափաբաժնի մասով մերժել է «Մեծ Հիմք» Ա/Կ-ի հայտը:

5. << գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը

<< գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհր Անանյանս, ուսումնասիրելով Երևանի քաղաքապետարանի 16.03.2018թ. թիվ 01/61-5738 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն (այսուհետ՝ Օրենք)՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքով սահմանված ժամկետով որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:

Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/46» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Մեծ Հիմք» Ա/Կ-ն:

«Մեծ Հիմք» Ա/Կ-ն 26.02.2018թ.-ին «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/46» ծածկագրով բաց մրցույթի հանձնաժողովին ներկայացված գրությամբ հայտնել է, որ 2018 թվականի փետրվարի 23-ին Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/46» ծածկագրով «Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի թվով 5 մանկապարտեզների վերանորոգման» աշխատանքների բաց մրցույթում որպես մասնակից հանդես եկած «Մեծ

Հիմք» Ա/Կ-ի կողմից ներկայացված թիվ 3-րդ չափաբաժնի գնային առաջարկում տեղի է ունեցել վրիպակ և խնդրել է «Մեծ Հիմք» Ա/Կ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը՝ վերը նշված չափաբաժնի մասով չքննարկել և մերժել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 27.02.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետի 1.2 ենթակետով կայացված որոշմամբ, հիմք ընդունելով «Մեծ Հիմք» Ա/Կ-ի կողմից 26.02.2018թ. ներկայացված գրությունը, թիվ 3-րդ չափաբաժնի մասով մերժել է «Մեծ Հիմք» Ա/Կ-ի հայտը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետը սահմանում է, որ **մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե <u>հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից</u>:**

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Մեծ Հիմք» Ա/Կ-ն «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/46» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի խախտում, քանի որ Ընթացակարգի հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Նույն Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 19.03.2018թ. թիվ 03/26-3/4976-18 գրությամբ «Մեծ Հիմք» Ա/Կ-ին (ՀՎՀՀ՝ 01201774) գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Մեծ Հիմք» Ա/Կ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ